## Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴԱՄՅԱՆ

Ծնվել է 1963 թ. սեպտեմբերի 20-ին Իրանի Աբադան քաղաքում:

1969 թ. ծնողների հետ հայրենադարձվել է Հայաստան:

1970-1980 թթ. սովորել է Էջմիածնի № 6 միջնակարգ դպրոցում:

1980 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1984 թ., ձեռամբ Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Մարգիս Շնորհալու հորդորակների մեկնությունը» թեմայով:

1987 թ. հունիսի 7-ին, Ներսես արքեպս. Պոզապալյանի ձեռամբ, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1987-1988 թթ. Արարատյան Հայրապետական թեմում վարել է առաջնորդական փոխանորդի օգնականի պաշտոնը:

1988 թ. պաշտոնավարել է Բուլղարահայոց թեմում որպես հոգևոր հովիվ՝ նախ Սոֆիայում, ապա Վառնայում:

1991 թ. պաշտպանել է վարդապետական թեզ «Բուլղար Ուղղափառ Եկեղեցին» թեմայով:

1999 թ. պաշտոնավարել է Արարատյան Հայրապետական թեմում որպես առաջնորդական փոխանորդի օգնական Արարատի մարզում:

2000 թ. մայիսի 22-ից, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ, նշանակվել է Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ:

2001 թ. օգոստոսի 1-ից, Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ, նշանակվել է Արմավիրի թեմի առաջնորդ:

2001 թ. սեպտեմբերի 30-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: